

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մեր գրական գործիչների և հասարակութեան մէջ փոխադարձ դժգոհութիւնը.—Ո՞վ է արդարը և ո՞վ մեղասրը.—Գրականութեան և հասարակութեան փոխադարձ կախումը.—Խօնչ է պահանջում ժամանակակից պայտաններում իր կոչման բարձրութեան վրայ կրնգնած մի օրգան հրատարակելու համար.—Անզօր գանգատներ և կադմակերպուսծ գործունէութիւն՝

դրան նպատակին հասնելու համար,

† Քանդակագործ Մ. Անտովովսկի. —† Ա. Պ. Խանօվսկի. —Զիմատվոների կողմից անշարժ կայքերի մասին վիճակագրութիւնը ժողովելու հարցը.—Մուրհակների մասին նոր կանոնադրութիւնն. —Ամուսնութիւնից դուրս ձնուած զաւակների իրաւունքները.—Գիւղատնտ. բարոքմ. համար կազմած Առանձին խորհրդակցութեան որոշումները,

Կարելի է ասել որ հէնց այն օրից երբ սկսեց մեր կեանքում որոշ գեր կատարել տպագրական խօսքը՝ ծնուեց և փոխադարձ դժգոհութիւն մեր դրական գործիչների և հասարակութեան ընթերցող և, որ աւելի զարմանալին է, նաև ոչընթերցող մասի մէջ... Այդ գժգոհութիւնները շարունակուում են և այժմ երեւի, կը շարունակուեն դեռ եւս երկար ժամանակ, մինչեւ որ երկու կողմերն էլ, մանաւանդ «հասարակութիւնը», չը թողնեն իրենց միակողմանի վերաբերունքը դէպի բուն հարցը.

Փորձենք պարզել այդ բուն հարցը:

Մեր գրական գործիչները դժգոհ են հայ հասարակութիւնից, որովհետեւ դա ցոյց է տալիս մի զարմանալի անտարբերութիւնների մէպի մայրենի գրականութիւնը, ոչ մի հոգ չի տանուագոյն պարմաների մէջ դնելու համար մեր գրականութեան զարգացումը: Ճիշտ է, այդ հասարակութեան մէջ կայ հայոց գրականութեան բարգաւաճման ընախանձախնդիրներից մի փոքրիկ խումբ, որի անդամներից շատերը իսկի երբէք չեն էլ կարդում հայերէն գիրք, ամսագիր, լրագիր, սակայն այդ

խումբն է որ ամենաթռուղ քննադատի դեր է կատարում մեր գրականութեան և գրական գործիչների նկատմամբ։

Խըստագույրը այդ ճախանձախնդիրներից, մատը-մատին չը խփելով իր կողմից մի որ և է ձևով օգնելու գործին, բաւականանում է միակողմանի և ինքնարաւական դատախաղի փառաւոր դիրքով։ Այդ դատախաղները մոռանում են որ իրենց պերճախօս յարձակումների պատկառելի մասը իսկապէս ուղղուած է հենց իրենց փառաւոր անձերի փայլուն անգործունէութեան վրայ. դրանք մոռանում են, որ դատախաղի դերում դուրս գալով՝ իրենց ցոյց են տալիս իրրեւ հասարակութեան «ամենահասկացող» տարր և, հետեւապէս, ամօթ է չը հասկանալ որ մի ազգի գրականութիւն, մի ազգի գրական գործիչներ լուսնից ընկած մասեր չեն, այլ ծնունդ որոշ հասարակութեան, դրա մտաւոր-բարոյական կարողութիւնների ճիշտ արտադրութիւն։ Մի հասարակութեան մէջ, որի «ամենազարգացած» տարրը զարհուրեցնում է իր քստիմնելի ինդիֆիկերենա տիզմով դէպի ազգային կեանքի համարեա միակ արտայատութիւնը՝ մայրենի գրականութիւնը. — մ'թէ պէտք է զարմանալ որ հրացք չի կատարւում և գրականութիւնը շատ և շատ հեռու է կանգնած լիդէալական պահանջներից։

Արդարամտութիւն չէ ուրանալ որ մեր գրական գործիչների լաւագոյն ներկայացուցիչները կանգնած են եղել իրենց ծնող հասարակութեան մտաւոր-բարոյական մակերեւոյթից շատ բարձր Այդպէս են եղել Աբովեանցը, Նաղարեանցը, Նալբանդեանցը, Արծրունին և այլն։ Օտար երկրների մէջ մտաւոր-բարոյական աճում ստանալով, դրանք, վերադառնալով հայրենիք, ոչ մի ջանք չէին խնայում իրենց մակերեւոյթին բարձրացնելու համար իրանց ծնող ժողովրդին։ Եւ ինչ օգնութիւն հասցըրին գրանց՝ իրանց մեր հասարակութեան սեր կամ աղ համարողները, դրանք իւրեանց մեծամիաւ և ինքնահաւաւան բարձրութիւնից գիտէին միայն դատափետել, մանրակրկիա խծրծանքով, անմիտ բամբասանքով դժուարութիւններ յարուցանել, տրտնջալ, ինչպէս հրէաները արտադում էին Մովսէսի դէմ որ նրանց հանոց եղիպատական գերութիւնից, իսկ Աւետեաց երկիրն հասնելու համար օդասլաց միջոցներ չը պատրաստեց այդ քնքոյց ստրուկների համար, որոնք անկարող էին անապատի նեղութիւնները յանձն առնել ապագայ երջանկութեան յոյսով։ Եւ զիտէք որքան տանջանքներ կրեցին և մեր Մովսէսները, որքան ջանքեր գործ դրին այդ գործիչները յաղթելու համար «անամսացած» հասարակութեան անապարբերութիւնը, մաքառելու համար սրտացաւ նախանձախնդիրների մավերջ ազգոցների դէմ։ Օդնողներ չը կային,

իսկ քննադատող—դատափետողներ, խոչդու յարուցանողներ  
—որբան կամիր:

Այժմ երբ այդ անցեալը անցած է, նորագոյն ճնախանձա-  
խնդիրները՝ սիրում են իրենց դատախազական ճառերի մէջ  
խորիմաստ ձևով յայննել—թէ «այլ էր առաջ, երբ գործում  
էին...և այն». թէեւ բաւական է այդ հին գործիշների կենսա-  
գըրութեան հետ ամենամթեթև ծանօթութիւն՝ համոզուելու հա-  
մար որ անցած իրականութիւնը նոյն իսկ աւելի զարհուրելի  
փաստեր է տալիս հայկական անտարբերութեան մասին:

Ուրեմն, հասարակութեան այդ սարսափելի անտարբերու-  
թիւնը և մեր նախանձախնդիրների յիշատակած գերը կար և  
առաջ, երբ գործում էին գրական ասպարէզի վրայ այժմ մեր  
պարծանք կազմող անունները, որոնց տաղանդը ամեն կատկա-  
ծից գուրս է:

Անցան մի քանի տասնեակ տարիներ. կեանքը մեր շուրջ  
հիմովին փոխուեց, գոյութեան կոփւը աւելի եւս սաստկացաւ,  
կրթութիւնը աւելի տարածուեց մեր ժողովրդի մէջ. բարձրա-  
գոյն ուսում ստացածների թիւը այժմ հազարներով կարելի է  
հաշուել. միայն Եւրոպայում ուսանում են 271 հայ ուսանող-  
ներ, եռապատիկ պէտք է համարել Ռուսաստանի բարձրագոյն  
դպրոցներում սովորող հայ երիտասարդների թիւը. մեր թե-  
մական դպրոցները իւրաքանչիւր տարի 40—50 ուսումնաւարտ-  
ներ են տալիս; Եւ այդ բոլորից յետոյ՝ ինչ—փոխուեց մեր  
հասարակութեան վերաբերմունքը դէպի մայրենի գրականու-  
թիւնը. գաղարեցին մեր «նախանձախնդիրները» լոկ պա-  
րապ դատախազների դեր կատարելուց, կարելի է ասել թէ  
համարեա ոչինչ չը փոխուեց. յամենայն դէպս, այդ փո-  
փոխութիւնը անսահման չնչին է իր՝ հասարակութեան մէջ  
եղած այլ փոփոխութիւնների համեմատութեամբ Թուանշաննե-  
րով էք ուզում կշռել այդ երեւոյթը:—Լաւ. հայ հեղինակը մե-  
զանում կարող է յոյս ունենալ որ տարին 300—400 օրինակ կը  
տարածուի նրա լաւ հեղինակութիւնից, առանց արուեստական  
միջոցների. համարեա միակ լրագիրը 30 տարի գոյութիւն ու-  
նենալով պէտք է իր բիւղմէն կազմի նկատի ունենալով միայն  
2400 բաժանորդ. 14 տարի հրատարակուող միակ ամսագիրը,  
պէտք է 600 բաժանորդով հրաշքներ գործի... Թուերի դէմ  
դժուար է առարկութիւններ անել:

Բայց, մեր «նախանձախնդիրները» այնուամենայիւ ա-  
ռարկութիւններ անում են և, ըստ երեւոյթին, այդ առարկու-  
թիւնները շատ խորիմաստ են: Դրանք ասում են. «Տուէք աւե-  
լի հնատարբեր, աւելի լուրջ, աւելի բազմակողմանի, աւելի

մեծ ճաշակով և տաղանդով կազմած գրքեր, լրագիրներ և ամսագիրներ և կը տեսնէք որ մէկ անգամից կը տասնապատկուեն այդ թուերը։ Բայց եթէ այդ ճիշտ լինէր գոնէ տաղանդաւոր անհատների՝ նկատմամբ՝ Արծրունու, Գամառ-Քաթիզպայի և Ռաֆփու—մինք չը պէտք է կարողանայինք բերել հակառակ փաստեր, արդեօք հասարակութիւնը առւակ դրանց այդ երազած թուերը։ Աչ, Մենք գնահատեցինք դրանց միայն այն ժամանակ, երբ դրանք թողին մեր փուչ իրականութիւնը... Բայց դեռ այդ փաստը մի կողմ գնենք, Խելքը զլիքն մարդը պէտք է իմանայ որ պատահական յօդուածների, սկսնակ փառասէրների կամ կուշտ բորժուաների «պարագ վախտի խաղալիք» գրուածքների վրայ յոյս դնելով՝ չի կարելի պահանջել՝ եր կոչման բարձրութեան վրայ կանգնած պարբերական հրատարակութիւն. մանաւանդ ներկայումս, երբ ապրուստ հայթայթելը դժուարացել է, իսկ մեր գործիչները բախտ չունեն պատկանելու կրեսունների դասին։ Միւս կողմից էլ ձրի աշխատակցութեան վրայ յոյս դնել նշանակում է ստանալ այն ինչ որ կայ. գրականութիւնը պէտք է կարողանայ ապահովել գրողի գէթ համեստ պահանջները, որպէս զի այդ ասպարէզում պատահական հիւրեր չը լինեն գրողները. Ամեն մի «Ըստանձախնդիր» անշուշտ գիտէ որ գրողի օրգանիզմը, նրա ընտանիքը, տարաբախտաբար, երազներով գոյութիւն պահպանել անկարող են... Ուրեմն, դրանք պահանջում են աշխարհիս ամենաարդար բանը—վարձատրութիւն իրանց արիւնքրտինք աշխատանքին. Սուրբ բան է աղնիւ աշխատանքի վարձատրութիւնը, շատ աւելի մաքուր, քան մակլերութիւնը կամ մոցիքութիւնը, որ շատերի համար ապրուստի պատուաւոր միջոցն է... Միայն այդ պայմաններում կարելի է ունենալ լուրջ տանուող մամուլի համար անհրաժեշտ աշխատողների թիւ, կօնտինգենտ Հետեւաբար, եթէ հասարակութիւնը կամ Ըստանձախնդիրները ցանկանում են որ հայոց լրակիրը, ամսագիրը համապատասխանեն իդէալական պահանջներին, պէտք է նախ և առաջ դատարկ խօսքերը, պարագ դանդասները մի կողմ թողնեն և ցոյց տան որ գիտեն և իրանց պարտականութիւնը, գիտեն թէ ինչ է պահանջում հասարակական օդուտը։

Այժմ մեր ընթերցող հասարակութեան պահանջները շատ աւելի խիստ են քան առաջ, Յւ ընականաբար այդպէս էլ պէտք է լինի. Բայց զարգացնել միայն քննադատական կողմը, որ անհրաժեշտ է, և ընդունակ չը լինել բազմակողմանի կերպով քըննել որոշ երեւոյթի պատճառները—զա ոչ մի բանի նման չէ։ Մենք պէտք է վերջապէս, մի կողմ թողնենք ասիացու սովո-

րութիւնը—ամեն բան յոյս դնել վերին տնօրինութեան ձեռներս ծալած սպասել հրաշքներ, լալ ու զանգատուել ուրիշների առաջ պարծենալով, մնաց անուանում հնք Ասէ եւրոպացիներ։ Սյդ ինքնախարէութիւն չէ արդեօք, յարգ պարոններ։

Եւրոպացին՝ երբ որոշ նպատակ է դնում իր համար՝ նալ բաղմակողմանի կերպով ուսումնասիրում է պայմանները, հանգամանքները և ապա նպատակայարմար կ ա զ մ ա կ ե ր պ ութիւն է տալիս իր դործ դրելիք ջանքերին, միջոցներ է ստեղծում որ իր աշխատանքը Սիդիթեան ջանքեր չը դառնան։ Եւ նա կազմակերպուած գործունէութեամբ միշտ համում է իր դրած նպատակին, իսկ ասիացին բերանը ծռած միայն զիտէ ողբար, գանգատուել և Ալլահից հրաշքներ սպասել… Դժգոհն էք։ —Գործով ցոյց տուէք որ կարող էք աւելի լաւ բան անել, ան փ ո փ ո խ թողնելով ներկայ բոլոր պայմանների համագումարը. մի բան որ մեզ թւում է անհնարին։ Պէտք է ընդհակառակը հիմուսին փոխել առհասարակ այժմեան վերաբեր մունքը դէպի գործը։ Ահա որն է զլսաւորը!»

25 լուլիսի.

Լ. Ս.

Յունիսի 27-ին վախճանուեց հոչակաւոր քանդակագործ Մարկ Անտոկուլով Նակար 1843 թ. հոկտ. 21-ին։ Դեռ մասուկ հասակում Անտոկուլին ցոյց էր տալիս մեծ ընդունակութիւն նկարչութեան մէջ։ Զքաւոր ծնողները նրան տուել էին մի փորագրիչ վարպետի մօտ իբրև աշակերտ։ Սյդ արհեստանոցի կեանքը գուր չեկաւ ապագայ հանձարին, որ 13 տարեկան հասակում վախճատ իր վարպետից և մի քանի տարիներից յետոյ զնաց Պետքերը ու ֆորձեց մի կերպ մտնել Գնդարուեստից ճեմարանը։ Ծնորհիւ քանդակագործ Պիմենօվի աջակցութեան 1862 թուականին տաղանդաւոր հրէայ պատանուն աջողուեց մտնել իր աենչած տաճարը։ Գեղարուեստից ճեմարանում Անտոկուլին բարեկամացաւ Ռէպինի հետ. ապագայ հոչակաւոր քանդակագործը և մեծ նկարիչը ուսանող ժամանակ միասին էին ապրում։ Անտոկուլին Ճեմարանում ամբողջապէս անձնատուր էր եղել իր սիրած արուեստին և շատ կարգում էր ու լուրջ պարապում իր ինքնազարգացմամբ։

Սակայն ճեմարանում քանդակագործութեան մէջ տիրող